



0084, Армения, Ереван, ул. Зор. Андраника 1
Тел: 72 00 10. Факс: 72 01 21

Zor, Andranik st. 1, Yerevan, Armenia, 0084
Tel: 72 00 10, Fax: 72 01 21
E-mail: hvenbec@gmail.com

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈՆՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
0084 Հայաստան, Երևան, Զոր. Անդրանիկի 1,
Հեռ. 72 00 10, Ֆաքս. 72 01 21

N 36-d

“20” “03” 2015թ.

ՀՐԱՄԱՆ

«ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԿԱՌՈՒՑՎՈՂ 220 ԿՎ ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ՄՈՏԵՑՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ Ա ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ և «Կալպատարու փառեր տրանսմիշն
լիմիթեդ» ընկերության միջև հաստատված «Էլեկտրամատակարարման հուսալիություն»
ծրագրի շրջանակներում կառուցվող 220 կՎ էլեկտրահաղորդման գծի հենարանների
կառուցման նպատակով մոտեցման ճանապարհների ընտրության կարգի կիրարկումն
ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում կառուցվող
220 կՎ էլեկտրահաղորդման գծի հենարանների կառուցման նպատակով մոտեցման
ճանապարհների ընտրության կարգը՝ կիրարկել 2015թ. մարտի 23-ից:

2. Հենարանների մոտեցման ճանապարհների ընտրության գործառույթներին
Ընկերության կողմից մասնակցելու համար ներկայացուցիչ նշանակել Ընկերության
մասնաճյուղերի տնօրեններին՝ ըստ հենարանների տեղակայման վայրերի /ցանկը կցվում է/:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել գլխավոր տնօրենի տեղակալ
Դ. Գևորգյանին:

Գլխավոր տնօրեն

Ա. ԱՆԱՆՅԱՆ

Ցանկ
Հրագրան ՋԷԿ- Շինուհայր ե/կ 220կվ օդային գծի հենարանների
տեղակայման վայրերը ըստ մասնաճյուղերի

| Հ/Հ | Մրագծի հատվածներ | Հենարանների համարներ | Ընդգրկված համայնքներ | Պատասխանատու մասնաճյուղը |
|-----|------------------|----------------------|--|-----------------------------|
| 1 | Առաջին հատված | թ.1 - թ.131 | Հրագրան, Դմաշեն,Ծաղկունք, Գեղամական, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Ծովագարդ,Լճափ, Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Գավառ | ԲԷՑ-Արևելյան մասնաճյուղ |
| | Երկրորդ հատված | թ.1 - թ.91 | Գավառ, Կարմիրգյուղ, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Երանոս, Վարդաձոր, Ջորագյուղ, Ծակքար, Լիճք | |
| | Երրորդ հատված | թ.1 - թ.76 | Լիճք, Վ. Գետաշեն, Ն.Գետաշեն, Գեղիովիտ | |
| 2 | Երրորդ հատված | թ.77 - թ.163 | Աղեջաձոր, Թառաթունք, Սալի, Շատին, Գետափ, Եղեգնաձոր | ԲԷՑ-Հարավային մասնաճյուղ |
| | Չորրորդ հատված | թ.1 - թ.133 | Եղեգնաձոր, Ագարակաձոր, Մալիշկա, Արին, Գեղնագ, Սարավան | |
| 3 | Չորրորդ հատված | թ.134 - թ.231 | Գորայք, Ծղուկ, Մառնակունք, Սպանդարյան, Անգեղակոթ, Շաղատ | ԲԷՑ-Գորիսի մասնաճյուղ |
| | Հինգերորդ հատված | թ.1 - թ.109 | Անգեղակոթ, Շաքի, Իշխանասար, Միսիան, Ույծ, Աղիտու, Նորավան, Վաղատին, Հարժիս, Շինուհայր, Գորիս | |

Հաստատում եմ՝ Approved by
«Պատվիրատու»՝ Client
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

High Voltage Electric Networks CJSC

Գլխավոր տնօրեն
General Manager



23.03.2015թ

Ա. Անանյան
A. Ananyan

Հաստատում եմ՝ Approved by
«Կապալառու»՝ Contractor
«Կալպատարու փառեր տրանսմիշն լիմիթեդ»
Kalpataru Power Transmission Limited

Ծրագրի ղեկավար՝ Դ. Սուլե
Project Manager D.Sule

ԿԱՐԳ

«ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 220 ԿՎ
ԷԼԵԿՏՐԱՀԱՂՈՐԴՄԱՆ ԳԾԻ ՀԵՆԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՈՏԵՑՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

Regulation

Regarding access roads for construction of Towers for 220KV transmission line in
the frameworks of Electric Supply reliability Project

1. Սույն կարգի նպատակն է «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի շրջանակներում կառուցվող Հրազդան-Շինուհայր 220 կՎ էլեկտրահաղորդման գծի հենարանների մոտեցման ճանապարհների (այսուհետ՝ մոտեցման ճանապարհներ) ընտրության և այդ ճանապարհների օգտագործման հետևանքով պատճառած վնասների փոխհատուցման գործընթացի կանոնակարգումը.

2. Մոտեցման ճանապարհները պետք է ընտրվեն հետևյալ գործոնների օպտիմալ համադրումից՝

ա/մայրուղուց մինչև շինարարության վայր մոտեցման նվազագույն հեռավորություն,

բ/ տեխնիկայի ազատ տեղաշարժման առավելագույն հնարավորություն,

գ/ հողամասերի սեփականատերերին հասցվող վնասի նվազագույն չափ,

դ/ սեփականատերերի հետ առավելագույն համաձայնեցվածություն,

1. The aim of this Regulation is to choose the access roads as well as to regulate the procedure of reimbursement of incurred damages while using access roads (hereafter-access roads) for construction of Towers for Hrazdan TPP – Shinuhair SS 220KV transmission line in the frameworks of Electric Supply reliability Project.

2. The access roads should be chosen considering the optimal combination of the following conditions:

a) Minimal distance from the main road to the construction site,

b) maximal possibility of machinery free passing,

c) minimal damage caused to the land owners,

d) maximal possible agreement with the affected owners,

ե/ ճանապարհի հարթեցման, սպասարկման և այլ կառույցների ծախսերի նվազագույն չափ:

3. «Կապալառուն» աշխատանքները սկսելուց առնվազն 10 օր առաջ դրա մասին գրավոր ծանուցում է «Պատվիրատուին» և տվյալ համայնքի ղեկավարին՝ նշելով տեղադրվող հենարանների համարները, աշխատանքների կատարման վայրը և ժամկետները:

4. «Պատվիրատուի» և «Կապալառուի» ներկայացուցիչները, համայնքի ղեկավարը և տվյալ հողատարածքի սեփականատերը, «Կապալառուի» ծանուցումը ստանալուց հետո երկօրյա ժամկետում պետք է այցելեն կառուցվող հենարանի տեղակայման վայր: Այցելության արդյունքում համաձայնեցվում է մոտեցման ճանապարհը, հաշվարկվում են սեփականատիրոջը հասցվող վնասի տեխնիկական պարամետրերը և գումարը՝ ելնելով անկախ փորձագիտական եզրակացությամբ տրված փոխհատուցման ելակետային տվյալներից: Այցի արդյունքում կազմվում է արձանագրություն, որում արտացոլվում է հենարանին մոտեցման ճանապարհի և աշխատանքների կատարման վայրի ուրվագծային քարտեզը, ինչպես նաև հասցվող վնասի համաձայնեցված հաշվարկները:

5. «Կապալառուն» պարտավորություն է կրում խստորեն ուղղորդվել ուրվագծային քարտեզում նշված մոտեցումներով, բացառելով ընտրված մոտեցման ճանապարհից և հատկացված շինարարական տարածքից ցանկացած շեղում:

6. Հիմք ընդունելով սույն կարգի 4-րդ կետում նշված արձանագրությունը, «Պատվիրատուն» տվյալ հողամասի սեփականատիրոջ հետ, սահմանված կարգով կնքում է հասցված վնասի փոխհատուցման վերաբերյալ համաձայնագիր:

Կնքված փոխհատուցման համաձայնագրի շրջանակներից դուրս, «Կապալառուի» մեղքով հասցվող այլ վնասները ենթակա են փոխհատուցման «Կապալառուի» կողմից:

7. Սույն կարգն ուժի մեջ է մտնում ս/թ մարտի 23-ից:

e) minimal costs of leveling, maintenance of access roads and other constructions.

3. The Contractor must inform the Client and the head of community in written form at least 10 days before starting of works, mentioning the tower numbers, locations and dates of implementation.

4. Representatives of the Client and Contractor, the community head and owner of the relevant plot within two days after receipt of notification from the Contractor, must visit the site of location of tower to be erected. As a result of visit, it should be identified the access road, be calculated technical parameters and amount of losses caused to the land owner based on raw data for compensation provided by the conclusion of independent expert. As a result of visit it is prepared a MoM, wherein the schematic map of access road and location of works to be implemented, as well as agreed calculations of caused losses shall be reflected.

5. Contractor shall be obliged to strictly follow to the accesses mentioned in schematic map, ruling out any deviations from a chosen access road and allocated construction area.

6. Based on the MoM, mentioned in item 4 of this Regulation, Client together with relevant land owner shall sign the corresponding agreement regarding the payment of compensation for caused losses. The payment of compensation for the other losses, caused by the Contractor beyond the scope of the signed compensation agreement, should be done on Contractor`s own costs.

7. These Regulation shall come into force from the March 23, of 2015.

Շինարարների փողոց 28/2
Էլ. փոստ՝ finapplic@gmail.com
Ֆեռախոս՝ +374 10 381155



Մշակաբույսերի 1քմ. մակերեսի փոխհատուցման զումարի որոշում

| N | Տեսակ | Բերքատվություն (կգ/քմ) | Միավորի գին (ՀՀ դրամ) | 1 քմ փոխհատուցման զումար (ՀՀ դրամ) |
|---|----------|---------------------------|--------------------------|---|
| 1 | Ցորեն | 0.30 | 180 | 54 |
| 2 | Գարի | 0.28 | 180 | 50 |
| 3 | Կորնզան | 0.70 | 60 | 42 |
| 4 | Կարտոֆիլ | 1.90 | 180 | 342 |
| 5 | Հաճար | 0.28 | 280 | 78 |

«Ֆինափ» ՍՊԸ

Մարտին Գրիգորյան
Վճարող

